

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր – Ղևոնդ Ալիշան, Արշակ Չոպանյան, հուշ, պատմություն, հայրենիք, կրոն, գրող, գիտնական, բանաստեղծություն, վերլուծություն, ընդհանրացում, ազդեցություն, ոճ, աշխարհայացք

Արշակ Չոպանյանը խորին ակնածանքով ու խանդադատանքով է վերաբերվել Ղևոնդ Ալիշանին, «բազմաթիվ առիթներով խոստովանել, թե իր պատանեկան հասակում, ուրիշ գրողների ու մտածողների թվում Ղևոնդ Ալիշանն է եղել, որ խոր ազդեցություն է թողել իր կազմավորման վրա»¹:

Չոպանյանը նրա հետ ծանոթացել է հավանաբար 1898 թ. Վենետիկում՝ Մխիթարյանների Սուրբ Ղազար կղզում, որտեղ մեկնել էր՝ հայ միջնադարյան ձեռագրերում պրպտումներ կատարելու²: Այդ հանդիպումից մնացել է ջերմագին մի հուշ. «Տպաւորութիւնը, գոր իր անձը վրաս թողոյց՝ երբ երեք տարիի չափ առաջ զինքը տեսայ Վենետիկի վանքին մէջ, շուարումի, խանդադատանքի եւ զմայլման բուռն խառնուրդ մը եղաւ. պարթեւ հասակով, թիկնեղ եւ վեհաշուք ծերունի մը կսպասէի գտնել, եւ տեսայ փոքրիկ, թեթեւ, գրեթէ աննիւթ էակ մը որ գետնին վրայէն կը սահէր աւելի քան կը քալէր, եւ որ իր թռչնակի վզին վրայ կը կրէր երկրպագելի գլուխ մը ալեւոր մանուկի - ծերացած հրեշտակ մը կարծես որ երկնքէն փախեր մեր մէջն էր եկեր իր բիւրեղէ երգովը պահ մը մեր ցաւերն անուշցնելու համար եւ որ կ'արտոբար սակայն վայրկեան մը առաջ վերաթռիլ դէպ ի իր հեռաւոր օդակառոյց կապոյտ բոյնը որուն կարօտն ունէր միշտ»³: Չոպանյանի այս ինքնաբուխ, հուզաբորբոք խոսքը, որը պատկերավոր բնութագրումներով հագեցած հիացական զգացմունքների արտահայտություն է, տեսանելի է բնութագրում Ալիշանի բոլորանավեր, աստվածասեր, «փափուկ ու կաթոզին» մարդկային կերպարը:

¹ **Դալլաքյան Գ.**, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 207:

² Տե՛ս նույն տեղում, էջ 102:

³ **Չոպանյան Ա.**, Չ. Ղևոնդ Ալիշան // «Անահիտ», 1902, թիւ 4, էջ 79: Այսուհետև այս հոդվածից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը:

Ա. Չոպանյանը, որ Մխիթարին ու միաբանությանը նվիրված իր մի քանի հոդվածներում¹ արդեն ամենայն բարեխղճությամբ և պատասխանատվությամբ, բազմաթիվ ճիշտ դիտարկումներով ներկայացրել էր Աբբահոր և նրա հիմնադրած միաբանության հայանպաստ գործունեության դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում և նրա պատմության համար, մի առանձին հոդվածով անդրադարձել է նաև Ալիշանին: Եվ դա պատահական չէ: Բացի անձնական ջերմ վերաբերմունքից՝ պետք է անշուշտ կարևորել նաև այն, որ մեծահամբավ գրող, գիտնական, խմբագիր, մանկավարժ Ալիշանը Չոպանյանի համար առանձնացել է իր բազմահարուստ կյանքով, վիթխարի գործով՝ շուրջ հիսուն հատորի հասնող և ամենազանազան բնույթ ու բովանդակություն ունեցող աշխատություններով (բանաստեղծություն, արձակ, գեղարվեստական թարգմանություն, պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, պատմիչների քննական տեքստերի հրատարակություն, գիտական բուսաբանություն, հայկական հեթանոսության ու նրա հավատալիքների քննական վերլուծություն, բանագիտություն և այլն)²: «Ոչ մեկ հայ Հայկեն մինչեւ այսօր,– գրում է Ա. Չոպանյանը,– չէ ցոյց տուած այդքան վիթխարի աշխատասիրութիւն մը՝ այդքան հարուստ ու փայլուն արդիւնքով մը պսակուած: Քսան հոգիի գործ կատարած է Ալիշան իր կեանքին ընթացքին մէջ, ամբողջ մատենադարան մը, ամբողջ աշխարհ մը թողած է մեզի. եւ հայ պատանիներու համար որ նոր կը սկսին ուսանիլ, զարգանալ ու կազմուիլ, եւ որոնք պէտք ունին իրենց ազգին ու հայրենիքին վրայ իրենց տաք ու ազնիւ ձայնի մը, չկայ աւելի կազդուրիչ, աւելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան քան այն գոր Ալիշան կանգնած է» (73): Գրականագետ Սուրեն Շտիկյանը Ալիշանին գրեթէ միևնույն գնահատականն է տվել. «Ալիշանը,– գրում է նա,– կարողացավ վճռականորեն բարձրանալ այն մարդկանցից ու միջավայրից, որտեղ ապրում ու գործում էր: Մխիթարյան ոչ նախորդ և ոչ էլ հաջորդ սերունդների մեջ, այս առումով, Ալիշանին հավասար ու համագոր մեծություն չենք գտնում»³:

Չոպանյանի՝ Ալիշանին նվիրված հոդվածում թեև ակնհայտ է զգացական տարրը, և հաճախ հեղինակի խոսքը նրա նկատմամբ ստանում է քնարական երանգներ, սակայն քննադատը իրեն հատուկ խորաթափանցությամբ Ալիշանի բազմաբովանդակ գործին տալիս է սեղմ ու դիպուկ գնահատականներ, անում բազմաթիվ կարևոր և արժեքավոր ընդհանրացումներ,

¹ Տե՛ս **Չոպանեան Ա.**, Վենետիկի Մխիթարեանները // «Անահիտ», 1899, թիւ 12, *նույնի՛* Մխիթարի գործը // Նույն տեղում, 1901, թիւ 8, *նույնի՛* Մխիթար // նույն տեղում, 1901, թիւ 10-11:

² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն (այսուհետև՝ ՀՆԳՊ), հ. 1, Երևան, 1962, էջ 480, **Մակվեցյան Է.**, Ղևոնդ Ալիշան // «Երիտասարդ գիտաշխատող», Երևան, 1970, էջ 55, Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, էջ 4, նաև՝ **Ալիշան Ղ.**, Երկեր, Երևան, 1981, էջ 3-14:

³ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 4-5:

որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչման արժանացած, սակայն չնոռանանք, որ նա այդ ամենը արել է ավելի քան հարյուր տարի առաջ, թեմայի ուսումնասիրության ասպարեզում նախորդելով շատ շատերին՝ եղել առաջիններից մեկը: Հարկ է նաև նկատել, որ անթաքույց խանդավառությունը և դրվատանքը չեն խանգարել քննադատին՝ երբեմն-երբեմն նաև անկեղծորեն և անաչառորեն ցույց տալու Ալիշանի բազմաբովանդակ գործի առանձին մասնավոր թերությունները:

Հողվածի սկզբում Չոպանյանը ելակետային մի դիտողություն է գրանցում՝ պարզելով ընդհանրապես գիտական քննություններում վերլուծական կարողության և երևակայական մտքի փոխհարաբերության հարցը, որի հետևությունն ուղղակիորեն կապվում է Ալիշանի գիտական-գրական ժառանգության արժևորման և նրա ստեղծագործական խառնվածքի, գիտական աշխարհայեցողության բնորոշման հետ: «Կատարեալ գիտունը,– գրում է նա,– պետք է անշուշտ մտքին հետ ունենայ եւ սիրտը, վերլուծման հետ եւ երեւակայութիւնը,– որովհետեւ առանց ստոր գիտունը կ'ըլլայ պարզ գործաւոր մը, անկարող՝ լայն հայեացքներու եւ մեծ հետեւութիւններու: Բայց միմիայն սրտով մարդ «գիտուն» չի կրնար ըլլալ: Բանաստեղծութեան մէջ, սիրտը կբաւէ յաճախ, կարեւորագոյն տարրն է գոնէ (թէպէտեւ ամենէն վեհ ներկայացուցիչները մարդկային բանաստեղծութեան ամենէն բարձր տեսակին, անոնք են որ կրցած են սիրտը մտքին միացնել...):

Ալիշան սիրտ մըն էր, բայց շատ մեծ սիրտ մը (ընդգծումը մերն է – Վ. Ա.): Այդ սիրտը ամբողջապէս լեցված էր երկու պարզ ու մեծ զգացումներով, Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը... Եվ այդ երկու սէրերը Ալիշանի հոգւոյն մէջ սերտօրէն իրարու կապուած էին, կամ աւելի ճիշդ՝ իրարու խառնուած, իրարու հետ ներքնապէս ընդելուզուած ու գրեթէ միակ զգացում մը դարձած էին, առանց սակայն իրենց ուրոյն անհատականութիւնը բոլորովին կորսնցնելու...» (69-70):

Այս բնորոշմամբ Չոպանյանը փաստորեն պարզում է Ալիշանի ստեղծագործության էությունը և ցույց տալով նրա հսկայածավալ ժառանգության նշանակությունը՝ մասնավորապէս նկատում, որ շատ մեծ է նրա՝ իբրև բանաստեղծի դերը, երբ գրողը իր բուն տարերքի մէջ է, երբ «թուականները, պատմական կամ կրօնական առեղծուածները, բանասիրական կնճիռները այլ եւս չեն ծանրաբեռներ իր թոփչը»: Եվ եթէ «Ալիշան չունէր վերլուծումի կարողութիւնը», իսկ հղացած գործերը չունէին «գիտական» անհրաժեշտ գործություն, ապա սոսկ այն պատճառով, որ, ինչպէս բացատրում է Չոպանյանը, նրա համար անվիճելի ու անքնին, հավիտենական ու վերջնական ճշմարտություն էր այն ամենը, ինչ Աստծո, աշխարհի, կյանքի և հայոց պատմության վերաբերյալ հաղորդել էին իր նախահայրերը, ինչ հատկապէս ավանդում էին Աստվածաշունչն ու Մովսէս Խորենացին՝ «գերագոյն գրքերը իրեն համար»: Ալիշանը խոր պաշտամունք ուներ այն ամենի նկատմամբ,

ինչ վերաբերում էր հայ հողին, հայոց պատմությանն ու մշակույթին: Նրա համար աշխարհի կենտրոնը Հայաստանն էր, երկրագնդի բոլոր լեռների մեջ վեհագույնը՝ Արարատը, իսկ ազգերի մեջ ամենից հինը, ամենից քաջն ու ազնիվը՝ հայր: Չոպանյանն ինքը ևս նկատում է, որ այսօրինակ աշխարհայեցողությունը շատերի համար կարող է ամբարշտություն թվալ, քմածին սնապարծություն, սակայն «իր աղամանդէ երազին մէջ փակուած այդ մաքուր ու մանկական հոգու» համար «սնամէջ հռետորութեամբ մը թարգմանուող ուռուցիկ զգայնությիւն մը չէր», այլ հավատամք:

Անշուշտ հարցն այնպէս չպետք է պատկերացնել, թե իբր Չոպանյանը անտեսում է Ալիշանի պատմական, բանասիրական, տեղագրական երկասիրությունների գիտական արժեքը: Ճիշտ է, թեև նա գտնում է, որ դրանցում հաճախ պակասում է քննադատական ոգին, պատմական շատ կնճռոտ հարցեր լուծված են բանաստեղծական ենթադրություններով, ավելի իշխող է զգացումը, քան գիտականությունը¹, սակայն, հատկապէս նկատի ունենալով այդ աշխատությունների՝ «իբրեւ նիւթեղէններու ամենէն փարթամ հաւաքածուն» լինելու օգտակար հանգամանքը, դրանք գնահատում է շատ բարձր և արդարացիորեն գտնում, որ Ալիշանին պետք է դատել իր ուրույն արժանիքի համեմատ, «իր մասնաւոր գործին մէջ», որն էր նախորդների փառավոր անցյալի օրինակով հարազատ ժողովրդին ազնվացնող ու կազդուրիչ հպարտություն ներշնչելը: Եվ իսկապէս, Ալիշանի կողմից մեր պատմությանն ու դրա հերոսական էջերին անդրադառնալը, ճիգը, թե Հայկազյան թագավորների օրոք հայերն արդեն միաստված էին, Հայաստանի գլխավոր նահանգների վերաբերյալ անհամար, բազմաբովանդակ տեղեկությունների հավաքագրումը, անցյալում տարբեր երկրների հետ հայերի ունեցած հարաբերությունների ամփոփումը, նշանավոր հայ շատ անհատների կյանքի և գործի համապատկերի կազմումը, նախնյաց ձեռագիր շատ գործերի հրատարակումը, հայ ժողովրդական երգերի հավաքածու կազմելը և թարգմանաբար եվրոպացիներին ծանոթացնելը և միմյանց հաջորդող տարբեր այլ ուսումնասիրություններ, համոզված ենք, մղված չէին միայն հեղինակի զուտ բանասիրական հետաքրքրությունից: Կար նաև մեկ այլ, ոչ պակաս էական խնդիր: Իր օրերին՝ «ողբալի, քայքայուած, մոխրապատ Հայաստանին» ու հայությանը վարակած վիատության ժամանակներում, պետք էր ապացուցել, որ Հայը աշխարհի ամենաուժեղ ազգերից մեկն է, քանի որ ունի վաղեմի պատմություն ու քաղաքակրթություն, բարոյական ուժ և իմաստություն: Այստեղ, կարծում ենք, տեղին է մեջբերել Ալիշանի գործը ուսումնասիրողներից հայր Բարսեղ Սարգիսյանի հետևյալ գնահատականը, որ կարող է հավաստել և լրացնել ասվածը. «...Ինքը կաթողիկէայ ճշմարիտ հայ էր՝

¹ Ըստ Դանիել Վարուժանի՝ «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կընէր»: Տե՛ս **Վարուժան Դ.**, Երկեր, Երևան, 1946, էջ 356:

մինչև իր ծուծը, և այնպես ալ կ'ուզէր ապրիլ ու մեռնիլ: Կ'ուզէր իջնել Հայոց ստորին խաւերուն՝ ժողովրդեանը մէջ. կ'ուզէր մօտէն բարբառել անոր սրտին, այսինքն՝ անոր աշուղներու միջնաշխարհիկ, պարզ ու գողտրիկ լեզուովն երգել Հայոց աշխարհիկը, օդն ու ջուրը. վասն զի՝ մէկ խօսքով կ'ուզէր ներշնչել Հայոց նոր սերունդին հայրենասիրութիւն...»¹:

Իր հողվածի հետագա շարադրանքում, ընդմիջարկելով խոսքը Ալիշանի բանաստեղծության մասին, Չոպանյանը անում է հետևյալ հավելումը, որ դարձյալ կարող է հաստատել մեր դատողությունը. «Այն շրջանին ուր Ալիշանի միտքը եւ քնարը կազմուեցան, հայ ժողովուրդը թանձր սգիտութենէ հազիւ սթափիլ սկսած, ստրկական բարքերը թօթափելու դեռ նոր մղուած, նիւթապէս ու բարոյապէս շատ տկար՝ յարաբերաբար դեռ շատ զօրաւոր Թուրքին լուծին տակ, անկարող էր վերսկսելու Մամիկոնեանց կամ Ռուբինեանց առնական ճիգը. Ալիշան, ինչպէս եւ այդ շրջանի հայ գրողներու մեծամասնութիւնը, կը մտածէր թէ նախ պէտք էր բարոյապէս, մտաւորապէս ամրացնել հայ տարրը...» (77): Այնուհետև մի առանձին խորհուրդ վերագրելով Ալիշանի ստեղծագործությանը՝ Չոպանյանը ցույց է տալիս, որ եթէ նա անգամ «ուղղակի» ոչ մի դեր չի կատարել հայկական ազատագրական շարժումների սկզբնավորման ու առաջխաղացման գործում, ապա նրա կողմից մեր ժողովրդի պատմական անցյալի քաջ ու դյուցազնական պատմության վերհանումը, հայ միտքը գայթակղելով իր գեղեցիկ, քաղաքականապէս անկախ ու հզոր անցյալի պատկերներով, մեծապէս նպաստել է հայ ազատագրական պայքարի ծննդյանն ու հետագա զարգացմանը²: «Ալիշանի գործը՝ սթափեցնող, ազնուացնող, ներշնչող մեծ ձայնն է եղած որ պատրաստած եւ դիրքացուցած է Բաֆֆիի գործը» (78),– վերջում եզրակացնում է նա:

Ա. Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Ալիշանի պատմագեղարվեստական արձակի գլուխգործոցն ու գազաթնակետը՝ «Յուշիկը հայրենեաց Հայոց» երկհատոր ստեղծագործությունը³, համոզված, որ դրանում «տիրապետող կրօնական զգացումը ոչինչ ունի թուլացուցիչ եւ ջլատիչ, այլ ընդհակառակն դրդիչ մը կը դառնայ աշխատասիրութեան, քաջութեան, առողջ հայրենասիրութեան» (73): Այստեղից էլ ամենևին պատահական չէ, որ Չոպանյանը «Յուշիկները» գնահատում է իբրև ազդակ Ծերենցի, Մամուրյանի ու Բաֆֆու՝ հայոց հին կյանքը վերակենդանացնող վեպերի հղաց-

¹ **Սարգիսեան Բ.**, Երկհարիրամեայ գրականական գործունէութիւնն եւ նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Միսիթարեան միաբանութեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1905, էջ 324: Նույն գնահատականին հանդիպում ենք և ուրիշների մոտ. տե՛ս, օրինակ՝ ՀՆԳՊ, հ. 1, էջ 481-482, 491, **Ալիխանեան Ա.**, Հ. Ղեւոնդ Ալիշան (բանախօսութիւն ծննդեան 150-ամեակին առթիւ) // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 400:

² Նույն գնահատականը տե՛ս ՀՆԳՊ, հ. 1, էջ 498, նաև՝ **Մակվեցյան Է.**, նշվ. աշխ., էջ 57:

³ Ղ. Ալիշանի այս երկի հանգամանակից վերլուծությունը տե՛ս **Երեմեան Ս.**, Ազգային դէմքեր. Գրագետ հայեր, Երրորդ շարք, Վենետիկ, 1913, էջ 92-120:

ման, Գ. Սրվանձտյանցի՝ հայ աշուղական երգերի և ընդհանրապես ժողովրդական տարասեռ ստեղծագործությունների հավաքչության (տե՛ս 76)՝:

Գալով Ալիշանի բանաստեղծությանը՝ Չոպանյանը այն համարում է գրողի «գործին ամենէն թանկագին, ամենէն բարձր մասը», որտեղ արդեն նա իր բուն տարերքի մեջ է՝ «իր երեսակայութեանը երկնքին մեջ»: «Իր երգը ամենէն վեհը, ամենէն ճոխը, ամենէն հզորն է, գոր հայ քնարը արձակած ըլլա երբեք, եւ ամենէն բազմագանը» (74)²,– գրում է Չոպանյանը: Բ. Սարգիսյանի հիացական մեծարանքը ամենին չի զիջում Չոպանյանի գնահատականին. «Հ. Ալիշանն ազգային բանաստեղծութեան ու քերթողաց արեզակն է: Յետագայք՝ գրեթէ առհասարակ՝ անկէ լուսաւորուեցան ու ներշնչուեցան. և թէ ընդհանուր տեսակէտով ոչ ոք կրցաւ գերազանցել զինքը, իբրեւ ինքնատիպ և տաղանդաւոր բանաստեղծ»³: Այս հարցում պակաս խանդավառ չէ նաև Մխիթարյան մեկ այլ միաբանի՝ Միմեոն Երեմյանի գնահատականը. «Հ. Ալիշան մեր մէջ այն միակ բանաստեղծն է, որ արժանի ըլլայ բանաստեղծ կոչուելու բառին ամբողջական նշանակութեամբը: Ինքը մեր պատնասներուն խումբին մէջ կ'ապրի իբրեւ ամենէն գերազանց անգուզական մեծ քերթողը»⁴:

Ուշագրավ է, որ անդրադառնալով ստեղծագործական առնչություններին, Չոպանյանը առաջին հերթին շեշտում է Ալիշանի բանաստեղծության կապը հայ միջնադարյան գրականության հետ: Ու թէև, ճիշտ է, առանց հատուկ զուգահեռներ անցկացնելու նա Ալիշանի քնարեգության մեջ տեսնում է Եղիշէի, Մովսէս Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Ներսէս Շնորհալու, Հովհաննէս Թլկուրանցու և Հովհաննէս Պլուզ Երզնկացու ձայները՝ ներդաշնակորեն խառնված եվրոպացի հեղինակներից Պետրարկայի, Լամարթինի, Միլթոնի, Հյուգոյի և Բայրոնի տավիղների մի քանի հնչյուններին, սակայն համոզված գտնում է, որ Ալիշանի երգը միանգամայն ինքնաբուխ է և իր շատ հատկանիշներով ինքնատիպ⁵: Նա գտնում է, որ Ալիշանը իր բանաստեղծական նկարագրով քրիստոնյա է («Ալիշան քրիստոնէայ է մինչեւ ոսկորներուն ծուծը»), ու որքան էլ թէև յուրացրել է արևմտյան գրականու-

¹ Ի դեպ, համանման միտք, որ ուղղակիորեն հիշեցնում է Ա. Չոպանյանի ասածը, հայտնում է Բասեղ Սազիսյանը. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 333: Հարկ է նշել, որ ընդհանրապես ակնառու է Ա. Չոպանյանի հողվածի ազդեցությունը Բ. Սարգիսեանի վրա, որի գրքում հանդիպում ենք նաև գրեթէ բառացի քաղվածքների Չոպանյանի հողվածից, սակայն առանց չակերտների կամ անհրաժեշտ հղումների: Համեմատի՛ր, օրինակ, Ալիշանի բանաստեղծական խառնվածքի բազմագանության մասին Չոպանյանի և Բ. Սարգիսեանի մոտեցումները. **Չոպանեան Ա.**, Հ. Ղեւոնդ Ալիշան, էջ 75 և **Սազիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 330:

² Հետագայում վերատպելով այս հողվածը «Դեմքեր»-ի առաջին հատորում՝ Չոպանյանը վերանայել է իր այս ձևակերպումը և «գոր հայ քնարը արձակած ըլլա երբեք»-ի փոխարեն գրել «գոր նոր ժամանակներու հայ քնարը արձակած է», որ բնականաբար ավելի ճիշտ է. տե՛ս **Չոպանեան Ա.**, Դեմքեր, հ. 1, Փարիզ, 1924, էջ 93:

³ **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 306:

⁴ **Երեմեան Մ.**, նշվ. աշխ., էջ 197-198:

⁵ Նույն համոզմունքին է և Բ. Սարգիսյանը. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 327:

թյունը, մնացել է «խորապէս արեւելցի», «խորապէս «հայ» մանաւանդ» (74):

Թվում է՝ ինչ-որ բան հարմար չի գալիս: Տարօրինակն այն է, որ պարբերաբար շեշտելով Ալիշանի խնամփութունը արևմտյան հեղինակների հետ՝ Չոպանյանը գտնում է, որ նա «խորապէս արեւելցի մնացած է սակայն»: Մի տեսակ կարծեք անհասկանալի է մնում այն տրամաբանությունը, որով նա «արեւելցի» Ալիշանին կապում է արևմտյան ռոմանտիկների հետ և այդ կապը համարում միանգամայն հասկանալի: Սակայն երբ հաշվի ենք առնում այն կարևոր հանգամանքը, որ Պետրարկան, Լամարթինը, Հյուգոն, Բայրոնը իրենց ստեղծագործական երբեմն խորհրդավոր, երբեմն հանդուգն, իսկ ավելի հաճախ նուրբ մտահղացումների դրսևորմամբ հարազատ են ընդհանրապես արևելյան գեղեցկագիտությանը, թերևս պարզ է դառնում, թե արևմտյան ազդեցության տակ ինչ է նկատի ունեցել Չոպանյանը: Ուրեմն՝ ստացվում է, որ արևմտյան ներգործությունը Ալիշանին ավելի շուտ առաջնորդել է դեպի իրեն հարազատ արևելյան մտածողության տարերքը:

Հարցը թերևս կարելի է դիտարկել մեկ այլ մեկնակետից ևս՝ առանց մերժելու նախորդը: Ալիշանի՝ իբրև բանաստեղծի ներաշխարհն ունի ինքնատիպ խոր արտահայտություններ, որոնք հղացել են բանաստեղծի համար գաղափարական երկու էական տարրերից՝ կրոնից և հայրենիքից, որ նկատում է Չոպանյանը: Ուրեմն՝ կարելի է կարծել, որ եվրոպացիների ազդեցությունը ունեցել է ավելի շուտ և շատ արտաքին, ձևական արտահայտություն, իսկ խորքում Ալիշանը միշտ մնացել է իր ներշնչանքի բուն տարերքում՝ հայրենիքի պաշտամունքի ու քրիստոնեական հավատքի նկատմամբ անձնուրաց սիրո մթնոլորտում:

Հոդվածում թեև, ինչպես արդեն նկատեցինք, ակնառու է անթաքույց խանդավառությունը Ալիշանի անձով ու գործով, որը, խոստովանենք, երբեմն Չոպանյանին մղում է չափազանցված գնահատականների, սակայն դրվատանքն ու ներբողը չեն խանգարում, որ նա ցույց տա նաև Ալիշանի բանաստեղծական ժառանգության առանձին թերությունները, ինչպես, օրինակ, «ճաշակի պակաս՝ երբեմն, համեմատութեան պակաս՝ յաճախ, մերթ ծայրայեղ ճոռոմութիւն, ու ստեպ՝ տղայաբանութիւնը վսեմին» և այլն (74), որ քննադատը պայմանավորում է նրա ապրած միջավայրով և համոզված գտնում, որ «եթէ Ալիշան եւրոպական մեծ ազգի մը ծոցը ծնած եւ ազատ կեանքի մը մէջ զարգացուցած ըլլար իր մտաւորական կարողութիւնները... յառաջ պիտի բերէր թերևս Հիկոյի կամ Պայրընի հաւասար արուեստագէտ մը» (75): Այնուհետև Չոպանյանը Ալիշանին իր քնարի լավագույն էջերով համարում է «Հայոց մեծագոյն բանաստեղծը, որովհետեւ, – ինչպէս ինքն է բացատրում, – որքան ալ Աբովեան, Պէշիքթաշլեան, Դուրեան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն սեռին մէջ ուր իրենք մասնաւոր ուժ մը ցոյց կուտան, Ալիշան զանոնք ամենքն ալ կը գերազանցէ իր տաղանդին անհուն բազմազանութեամբը, լեզուին հարստութեամբն ու ճապկութեամբը, տաղաչափութեան անվերջ պէսպիսութեամբը» (75):

Հողվածի շարունակության մեջ Չոպանյանը, ճիշտ է, առանց որոշակի մասնավորումների, նշում է նաև Ալիշանի՝ ժամանակի թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ գրողներից շատերի՝ առանձնապես Մկ. Պեշիկթաշյանի, Պ. Դուրյանի, Ռ. Պատկանյանի, Ղ. Աղայանի, Ծերենցի, Բաֆֆու վրա ունեցած ազդեցությունների մասին¹՝ նկատելով, որ նա ժամանակակից ոչ մի հայ հեղինակի, անգամ Մխիթարյան գրողների, ստեղծագործական ներգործությունը չի ունեցել: Վերջին պնդման հետ իհարկե դժվար է համաձայնել, որովհետև Ալիշանը ևս ենթարկվել է Մխիթարյան միջավայրի «վտանգավոր փորձությանը»՝ «վարժապետական» քարոզի գայթակղությանը, մի բան, որ Դանիել Վարուժանի մասին իր հողվածում վկայում է հենց Չոպանյանը²: Մխիթարյաններից Քիպարյանն Ալիշանի 150-ամյակին նվիրված իր հողվածում գրում է, որ «Ալիշան իր պատանեկություն անցուց այս շրջանակին մեջ (Մխիթարյան – Վ. Ա.), շնչեց այս մթնոլորտը, որմէ չազդուիլ կարելի չէր...»³:

Անշուշտ, վիճակն այլ է, երբ խոսքը վերաբերում է «Երգք Նահապետի» շարքին, որը դուրս է Մխիթարյանների բանաստեղծության զարգացման ընդհանուր օրինաչափություններից: «Ալիշանից ո՛չ առաջ և ո՛չ էլ հետո Մխիթարյան բանաստեղծները նման բան չեն ստեղծել»⁴,– գրում է Ա. Ինճիկյանը: Միքայել Նալբանդյանը հենց այս շարքը նկատի ուներ, երբ գրում էր, որ «չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախտյան չունի...»⁵:

Իր խոսքը ամփոփելով «Հայութեան մեծ-հայրիկի» անձի ու կյանքի փառաբանությամբ՝ Ա. Չոպանյանը անմնացորդ հավատով վստահեցնում է, որ Ալիշանի «տաք», «սիրուն» հոգին ու գործը հավերժորեն պետք է ուղեկցեն սերունդներին, և Վենետիկի միաբաններից պահանջում է հանգամանորեն հայությանը ծանոթացնել Ալիշանի կենսագրությանն ու գործին, ամբողջական պատկերացում տալ նրա խառնվածքի ու դերի մասին:

Այսպիսով, ինչպես տեսանք, Արշակ Չոպանյանի՝ Ղևոնդ Ալիշանին նվիրված հողվածը, որ հաճախ ունի խոսքի քնարական երանգավորումներ,

¹ Այս հարցի կապակցությամբ Բ. Սարգիսյանի խոսքը թերևս ավելի արժեքավոր է, քանի որ նա վերլուծաբար, հաճախ նաև կոնկրետ ստեղծագործությունների համադրությամբ ու բաղդատմամբ հիմնավորում և ցույց է տալիս հայ հեղինակներից շատերի՝ Ալիշանից ունեցած ազդեցությունները. տե՛ս **Սարգիսեան Բ.**, նշվ. աշխ., էջ 331, 333: Հետագայում շատերն են խոսել մեզանում Ալիշանից ստացած ստեղծագործական ներշնչման և ազդեցությունների մասին. տե՛ս, օրինակ, **Ճանաչեան Մ.**, Հ. Ղևոնդ Ալիշան՝ Նահապետ Հայոց (իր ծննդեան 150ամեակին յիշատակով) // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 300, **Ալիխանեան Ա.**, նշվ. աշխ., էջ 400:

² Տե՛ս **Չոպանեան Ա.**, Դեմքեր, հ. 2, Փարիզ, 1929, էջ 114:

³ **Քիպարեան Կ.**, Ղևոնդ Ալիշան // «Բազմավեպ», 1970, թիւ 11-12, էջ 315: Նույն գնահատականը տե՛ս նաև՝ ՀՆԳՊ, հ. 1, էջ 497:

⁴ ՀՆԳՊ, հ. 1, էջ 75:

⁵ **Նալբանդյան Մ.**, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1940, էջ 120:

գրական ու բանաստեղծական ոճ, ուշագրավ է Ալիշանի բազմավունդակ գործը մեկնաբանելու, վերլուծելու արժեքավոր դիտարկումներով, որոնք այսօր ևս ընկալվում են իրենց գիտական արժեքայնությամբ, հետաքրքիր և ուսանելի են հասկապես գրող-բանաստեղծ Ալիշանի ստեղծագործության վերաբերյալ տեսական, իսկապես հիմնարար արժեք ունեցող դրույթներով:

Вачаган Авагян – Гевонд Алишан в оценке Аршака Чопаняна

Основываясь на статье знаменитого литературоведа Аршака Чопаняна (1872-1954) о знаменитом писателе и ученом Гевонде Алишане, написанной еще в 1902 г., автор сделал попытку показать, как А.Чопанян, будучи одним из первых в области изучения оценочной стороны данной темы, со свойственной ему литературоведческой проникновенностью дал краткую и точную оценку содержательной деятельности Алишана, сделал многочисленные важные обобщения, которые и по сей день сохраняют свою значимость благодаря научной ценности. Особенно интересны и поучительны тезисы, касающиеся произведений писателя и поэта и имеющие значительную теоретическую ценность.

Vachagan Avagyan – Ghevont Alishan in Archag Tchobanian's Appreciation

The pivotal point of current study is the article, written in 1902 by eminent literary critic Archag Tchobanian (1872-1954) on prominent writer and researcher Ghevont Alishan (1820-1901). It shows how Tchobanian, being one of the first in the appreciation area of his subject study, gave short and precise evaluations of Alishan's multifaceted work with special literary insights, making many important and valuable generalizations, which are still perceived with their scientific value; they are interesting and valuable especially with their points of theoretical and really fundamental value of Alishan's poetical works.

Ներկայացվել է 12.03.2020

Գրախոսվել է 24.03.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020